# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
# ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սլովակիայի Հանրապետության Կառավարությունը և Հայաստանի Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր),

հաստատելով երկու պետությունների միջև բարեկամական հարաբերություններ,

գիտակցելով առկա տնտեսական հարաբերությունները շարունակելու և ամրապնդելու կարևորությունը և նշանակությունը,

ցանկանալով նպաստել հավասարության և փոխշահավետության վրա հիմնված իրենց տնտեսական համագործակցության զարգացմանը,

ղեկավարվելով Սլովակիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ և հաշվի առնելով իրենց միջազգային պարտավորությունները,

համաձայնեցին հետևյալի մասին.

## ՀՈԴՎԱԾ 1
## ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1.1. Սույն Համաձայնագրի նպատակն է զարգացնել և խորացնել Պայմանավորվող կողմերի միջև տնտեսական համագործակցությունը հավասարության ու փոխշահավետության հիման վրա, ինչպես նաև Պայմանավորվող կողմերի պետությունների ներպետական օրենսդրության համապատասխան:

1.2. Համագործակցությունը ներառում է հետևյալ ոլորտները, սակայն չի սահմանափակվում դրանցով.

a) արդյունաբերություն և շինարարություն.

b) տրանսպորտ և նյութատեխնիկական ապահովում.

c) ներդրումների խթանում.

d) էներգետիկա և հանքային արդյունաբերություն.

e) տուրիզմ.

f) փոքր և միջին ձեռնարկություններ (ՓՄՁ-ներ).

g) գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն.

h) շրջակա միջավայրի պաշտպանություն և ջրային ռեսուրսների կառավարում.

i) հեռահաղորդակցություն, թվայնացում, նորարարություն և էլեկտրոնային կառավարում.

j) տեղեկատվական տեխնոլոգիաներ.

k) տնտեսական համագործակցության այլ ոլորտներ, որոնք հնարավոր է փոխադարձաբար համաձայնեցնել:

1.3. Սույն Համաձայնագրի պայմանների համաձայն, խթանելով

հարաբերություններն և ամրապնդելով համագործակցությունը, Պայմանավորվող կողմերը խրախուսում են համապատասխան տարածքային և տեղական իշխանություններին, մասնագիտական պալատներին, գործարար ընկերակցություններին և մասնավոր հատվածին՝ տնտեսական համագործակցության տարբեր ոլորտներում նախագծերի իրականացման ընթացքում առկա հնարավորություններն ուսումնասիրելու համար:

## ՀՈԴՎԱԾ 2
## ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պայմանավորվող կողմերը՝

a) ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ երկու պետությունների միջև տնտեսական համագործակցությունը զարգացնելու համար.

b) ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ երկու պետություններում տնտեսական իրավիճակի, կանոնակարգերի, տնտեսական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև գործարար և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ տեղեկատվություն փոխանակելու համար.

c) վեր են հանում այն խնդիրները, որոնք խոչընդոտում են երկկողմ տնտեսական համագործակցությանը, և առաջարկում են այդ խնդիրների լուծմանն ուղղված միջոցներ.

d) խրախուսում են ներդրումային գործունեությունը, համատեղ ձեռնարկությունների հիմնադրումը և աջակցում են երկու պետությունների տարածքներում ներկայացուցչական գրասենյակների ու ընկերությունների մասնաճյուղերի բացմանը.

e) խրախուսում են տնտեսության զարգացման քաղաքականությունը մշակողների, պետական կառույցների, մասնագիտական կազմակերպությունների, գործարար ընկերակցությունների, առևտրի պալատների միջև կապերի հաստատմանը և համագործակցության ամրապնդմանը.

f) աջակցում են գործարար պատվիրակությունների փոխադարձ այցելություններին և խրախուսում են դրանք:

## ՀՈԴՎԱԾ 3
## ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

3.1. Պայմանավորվող կողմերը երկկողմ տնտեսական համագործակցությունը համակարգելու և խթանելու նպատակով ստեղծում են սլովակա-հայկական տնտեսական համագործակցության հարցերով համատեղ աշխատանքային խումբ (այսուհետ՝ Համատեղ աշխատանքային խումբ), որը բաղկացած է Պայմանավորվող կողմերի համապատասխան մարմինների ներկայացուցիչներից: Համատեղ աշխատանքային խումբը համակարգում և զարգացնում է տնտեսական համագործակցությունը՝

a) հետևելով սույն Համաձայնագրի նպատակների իրականացմանը.

b) զարգացնելով սույն Համաձայնագրում նշված կամ Պայմանավորվող կողմերի միջև հետագայում այլ կերպ համաձայնեցված ոլորտներում

համագործակցությունը.

c) վեր հանելով սահմանափակումները և պատշաճ կերպով առաջարկելով լուծումներ դրանց հաղթահարման համար:

3.2. Համատեղ աշխատանքային խմբի հանդիպումներն անհրաժեշտության դեպքում, Պայմանավորվող կողմերից մեկի պահանջով և մյուս Պայմանավորվող կողմի համաձայնությամբ, այլընտրանքային սկզբունքով անցկացվում են երկու պետություններում:

3.3. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրն իր կողմից նշանակում է նախագահ (այսուհետ՝ Համանախագահ), և յուրաքանչյուր Համանախագահ նշանակում է Համատեղ աշխատանքային խմբի՝ համապատասխան հարցերով քարտուղար:

3.4. Հանդիպման ամսաթիվն ու օրակարգն առաջարկում է ընդունող Պայմանավորվող կողմը, որի քարտուղարը պատասխանատու է արձանագրությունները (արձանագրություն) պատրաստելու համար:

3.5. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը հոգում է Համատեղ աշխատանքային խմբի հանդիպումների հետ կապված՝ իր պատվիրակությունների ծախսերը:

## ՀՈԴՎԱԾ 4
## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

4.1. Սույն Համաձայնագիրը չի ազդում Սլովակիայի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության կողմից երրորդ կողմի հետ կնքված՝ միջազգային պայմանագրերից բխող որևէ իրավունքի և պարտականության, ինչպես նաև միջազգային կազմակերպություններում երկու պետությունների անդամակցությունից բխող իրավունքների և պարտականությունների վրա:

4.2. Սույն Համաձայնագիրը կիրառվում է՝ առանց շոշափելու Սլովակիայի Հանրապետության՝ Եվրոպական միությանն անդամակցությունից բխող պարտավորությունները: Ուստի սույն Համաձայնագրի դրույթները չեն կարող մեկնաբանվել կամ կիրառվել այնպես, որ դադարեցնեն կամ այլ ձևով ազդեն Եվրոպական միության մասին պայմանագրով ստանձնած պարտավորությունների վրա:

## ՀՈԴՎԱԾ 5
## ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրարկման հետ կապված ցանկացած տարաձայնություն Պայմանավորվող կողմերի միջև կարգավորվում է դիվանագիտական ուղիներով անցկացվող բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

## ՀՈԴՎԱԾ 6
## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել Պայմանավորվող կողմերի

փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Այդ փոփոխությունները կատարվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ 7
## ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

7.1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ իրենց համապատասխան ներքին ընթացակարգերի ավարտի մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից 30 (երեսուն) օր հետո:

7.2. Սույն Համաձայնագիրը կնքվում է 5 (հինգ) տարի ժամկետով և դրանից հետո ինքնաբերաբար շարունակում է ուժի մեջ մնալ հաջորդ հնգամյա ժամկետներով, եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկն առնվազն վեց ամիս առաջ դիվանագիտական ուղիներով գրավոր չի ծանուցում մյուս Պայմանավորվող կողմին սույն Համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է _____________ քաղաքում 2021 թվականի _______________ ____-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ սլովակերեն, հայերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի մեկնաբանման հետ կապված ցանկացած տարաձայնության դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

| ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ |
| --- | --- |